

A 07.00.01
Ա - 92

1767210

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՇԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԿ ՄԱՋՍԻՄԻ

ՈՌԻԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՅՄԱՆ ԵՎ
ՀԱՅՈՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ
(1145-1219թթ.)

Մասնագիտությունը. Հայոց պատմություն Է.00.01

Պատմական գիտությունների քեկնածուի
գիտական աստիճանի հայցման առեմախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Բ

ԵՐԵՎԱՆ -1996

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ.Մ.ԲԱՐԹԻԿՅԱՆ

պատմական գիտությունների քեկնածու, դոցենտ Գ.Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն Խ.Արովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է *„26, Եպեմոսի 1996թ., ժամը 13 -ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 մասնագիտական խորհրդի նիստում (375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ):*

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է *„25, հուլիսի 1996թ.:*

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների քեկնածու *Վ.Բ.Բ.* Ա.Ա.ՄԵԼԵՈՆՅԱՆ

3867-96

Թեմայի արդիականությունը. Բյուզանդական կայսրության և սելջուկյան քուրքերի դեմ հայ ազգային-ազատագրական անկոտրում պայքարի քուրաչում, Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան մերձափնյա հողերում, մասնավորապես Կիլիկիա երկրամասում XI դարի վերջին քառորդին խարսխվեց Հայոց միջնադարյան վերջին և փառավոր պետականությունը: Կիլիկյան Հայաստանի XII դարի երկրորդ կեսի և XIII դարի սկզբի պետականության պատմությունը հայ ժողովրդի հաստատակամության, ստեղծարար ոգու քոչիքի և քաղաքական անկախության վերակերտման ամենաբովանդակալից էջերից մեկն է: Ուստի, առանց Կիլիկիայի հայկական պետության 1145-1219թթ. պատմության համակողմանի ուսումնասիրության, անհնար է պատկերել Հայոց միջնադարյան պետականության ամբողջական պատմությունը: Այն արդիական հնչողություն է ստանում հատկապես մեր օրերում, երբ դարավոր պետական ավանդույթներ ունեցող հայ ժողովուրդը վերակերտում է իր քաղաքական անկախությունը:

Գտնվելով ծովային և ցամաքային հաղորդակցությունների մայրուղիների խաչմերուկում, կամրջելով Ասիա, Աֆրիկա և Եվրոպա աշխարհամասերը, XII դարի երկրորդ կեսին և XIII դարի սկզբին Կիլիկյան Հայաստանը քաղաքական, տնտեսական և մշակութային գործուն կապեր էր հաստատել բազմաթիվ երկրների և ժողովուրդների հետ, նշանակալից դեր խաղացել միջազգային հարաբերություններում: Կիլիկյան Հայաստանի 1145-1219թթ. պատմության ուսումնասիրությունը օգնում է ամբողջական պատկերացում ունենալ մի շարք երկրների և ժողովուրդների, հատկապես Բյուզանդիայի, խաչակիր ասպետների, սելջուկյան քուրքերի, մահմեդական զանազան ամիրայությունների այդ ժամանակաշրջանի պատմության բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Դրանով իսկ սույն ատենախոսության քեման կարևոր նշանակություն և հետաքրքրություն է ներկայացնում նաև Մերձավոր Արևելքի և Եվրոպայի մի շարք երկրների ու ժողովուրդների պատմության համակողմանի ուսումնասիրման համար:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը. Հայագիտության մեջ զգալի աշխատանք է կատարվել Կիլիկյան Հայաստանի XII դարի երկրորդ կեսի և XIII դարի սկզբի պատմության ուսումնասիրման գործում: Առաջինը Մ.Չամչյանն էր, որն իր «Պատմություն Հայոց» երկասիրության երրորդ հատորում (Վենետիկ, 1786) փորձեց շարադրել Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմությունը:

Կիլիկյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության մի շարք հարցերի, մասնավորապես զանազան սկզբնաղբյուրների հավաքման և գի-

տական ուսումնասիրության գործում գնահատելի վաստակ ունեն ֆրանսիացի հայագետներ Է.Ղյուլրիեն (Recueil des Historiens des Croisades, Documents Armeniens, t.I, Paris, 1869) և Վ.Լանգլուան (Le Tresor des chartes d'Armenie au Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venis, 1863):

Խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման համար եզակի և հիմնարար արժեք է ներկայացնում Ղ.Ալիշանի «Սիսուան» (Վենետիկ, 1885) աշխատությունը, որն իրավամբ կարելի է համարել Կիլիկյան Հայաստանի պատմության ցարդ չգերազանցված հանրագիտարան:

Կիլիկիայի հայկական պետության պատմության ուսումնասիրման համար ծանրակշիռ արժեք է ներկայացնում Գ.Միքայելյանի «Կիլիկիայի հայկական պետության պատմություն» (ռուսերեն, Երևան, 1952) ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակն անդրադարձել է Կիլիկյան Հայաստանի 1145-1219թթ. քաղաքական և տնտեսական պատմությանը:

Կիլիկյան Հայաստանի խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության գանձաքան բնագավառների և հարցերի լուսաբանման գործում շոշափելի ներդրում ունեն նաև Մ.Օրմանյանը, Մ.Բոռնազյանը, Ա.Սուրիապանը, Զ.Պատուկյանը, Մ.Հովհաննեսյանը, Ա.Բոզոյանը, Թ.Բոռզը, Վ.Ռոս-Քոլեմբերը, Ռ.Էդվարդսը և ուրիշներ:

Ատենախոսության սկզբնաղբյուրները. Սույն ատենախոսության շարադրումը կատարվել է միջնադարյան հայկական հեղինակների (Մատթեոս Ոռոհայեցի, Գրիգոր Երեց, Մամվել Անեցի, Գրիգոր Տղա, Ներսես Լամբրոնացի, Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի, Վահրամ Բաբուրի, Հեթում պատմիչ, բյուզանդական պատմիչների (Հովհաննես Կինգանոս, Նիկիտաս Խոնիատես), ասորական հեղինակների (Միսայել Ասորի, Անանուն Եղեսացի, Գրիգոր Աբու-լ Ֆարաջ), արաբալեզու պատմիչների (Քամալ ադ-Դին, Բահա ադ-Դին Իբն Շադդադ, Իբն ալ-Ասիր, Աբու Ֆիդա) երկերի լայն հենքի վրա: Սույն ատենախոսության համար սկզբնաղբյուրներ են ծառայել նաև բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններ, վիճակառարձանագրություններ, հրավարտակներ, առևտրական շնորհագրեր, նվիրատվությունների փաստաթղթեր, պայմանագրեր, դրամներ և այլն:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ինչպես նշվեց, Կիլիկյան Հայաստանի XII դարի երկրորդ կեսի և XIII դարի սկզբի պատմության հետազոտման գործում կատարվել է զգալի աշխատանք: Սակայն խնդրո առարկա ժամանակաշրջանի բազմաթիվ հարցեր դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն և կարոտ են լուսաբանման:

Ներկա ուսումնասիրության նպատակն է ի մի հավաքել Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության XII դարի երկրորդ կեսի և XIII դարի

սկզբին վերաբերող նյութերը, հայ և օտար սկզբնաղբյուրների տեղեկությունները, մատենագրական և պատմական նյութերի ու հետազոտությունների հիման վրա ամրոջացնել Կիլիկյան Հայաստանի 1145-1219թթ. քաղաքական պատմությունը և պետականության զարգացման գործընթացը, հատկապես ծանրանալով Լևոն Բ Մեծագործի (1187-1219թթ.) ժամանակաշրջանի վրա:

Ատենախոսության կարևոր խնդիրներից է հնարավորին չափ ամրոջակական ներկայացնել Կիլիկիայի Հայոց իշխանապետության 1145-1187թթ. քաղաքական պատմությունը, այսինքն Թորոս Բ, Մլեհ և Ռուբեն Գ Մեծ իշխանների կառավարման ժամանակահատվածը, երբ Հայոց պետականությունը Կիլիկիայում վերակերտվեց և անկասելի վերելք ապրեց: Առանց այդ ժամանակաշրջանի պատմության լիակատար լուսաբանման անհնար է ներկայացնել այն նախապայմանները, որոնց արդյունքում Կիլիկյան Հայաստանը Լևոն Բ-ի օրոք դարձավ Մերձավոր Արևելքի ամենահզոր քրիստոնեական պետությունը:

Ուսումնասիրության խնդիրներից է հրատարակված, սակայն պատմագիտության մեջ դեռևս գիտական շրջանառության մեջ չընկած բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանների հիման վրա պարզաբանել և շտկել քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող մի շարք դեպքեր և իրադարձություններ:

Ատենախոսության կարևոր խնդիրներից է նաև Կիլիկիայում վերակերտված Հայոց քաղաքականության նոր մեկնաբանումն ու վերաիմաստավորումը, մինչքաղաքական ժամանակաշրջանի պետական կառավարման համակարգի ուսումնասիրումը, Սմբատ Սպարապետի «Տարեգիրք» երկում բերված Լևոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակցած Կիլիկիայի Հայոց բերդատեր իշխանների ցուցակի քննարկումը: Խնդիր է դրվել ներկայացնել նաև Լևոն Բ-ի ներքին քաղաքականության այն էական գծերը, որոնք միտված էին միապետության կենտրոնացմանը:

Ուսումնասիրության գիտական նորությունը: Սույն ատենախոսության մեջ համակողմանի քննարկվել են լուսաբանման կարոտ մի շարք հարցեր, նորովի մեկնաբանվել տվյալ ժամանակաշրջանին վերաբերող գանձաքան իրադարձություններ, վերագնահատվել պատմագիտության մեջ տարածում ստացած որոշ եզրակացություններ:

Վերը թվարկված խնդիրների և հարցերի քննությամբ են պայմանավորված ներկա հետազոտության նորամուծությունները:

ա) Աղբյուրագիտական հարուստ նյութերի հիման վրա ներկայացվել է Ռուբինյան իշխանապետության 1145-1187թթ. համեմատաբար ամրոջացված քաղաքական և պետականության վերակերտման ու զարգացման պատմությունը:

բ) Ճշգրտվել և մեկնաբանվել է Կիլիկիայի Հայոց Մեծ իշխանության տարածքային աստիճանական աճը 1147-1198թթ.:

գ) Յույց է արվել, որ պետական կառավարման մարմինների ձևավորումը Կիլիկյան Հայաստանում սկսվել է իշխանապետության հիմնադրումից ի վեր, հատկապես՝ XII դարի երկրորդ կեսին և ավարտուն տեսք ստացել Լևոն Բ-ի գահակալման ժամանակաշրջանում:

դ) Առաջին անգամ փորձ է արվել հիմնավորել Կիլիկիայում 1198թ. վերակերտված Հայոց թագավորության համազգային իրավասությունը, ցույց է արվել Լևոն Բ արքայի ծրագրերն ու հետևողական ջանքերն այդ իրավասությունը կենսագործելու ուղղությամբ:

ե) Առաջին անգամ հանգամանորեն քննարկվել և պարզաբանվել է 1198թ. Լևոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակցած Կիլիկյան Հայաստանի ավատառու վերնախավի՝ 46 բերդատեր իշխանների ինքնությունը, ճշգրտվել նրանց տիրույթների տեղերը, ցույց տրվել այդ բերդատերերի պաշտոնական կարգավիճակը պետական կառավարման համակարգում:

զ) Փորձ է արվել ամբողջական տեսքով ներկայացնել Լևոն Բ-ի ներքին քաղաքականության, այն էական գծերը, որոնք միտված էին հոգևոր և աշխարհիկ դասերի անջատամետ նկրտումների սանձմանը, միապետության կենտրոնացմանը և արքունի իշխանության ամրապնդմանը:

է) Պատմագիտության մեջ դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանների հիման վրա պարզաբանվել և շտկվել են քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող մի շարք դեպքեր և իրադարձություններ:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ներկայացվող ատենախոսությունը հիմնվում է հայ և օտար սկզբնաղբյուրների, պատմական ուսումնասիրությունների համակարգված քննության և վերլուծության վրա: Աշխատանքը գրված է մենագրության ձևով, կաշկանդված և կաղապարված չէ հանրաճանաչ հեղինակությունների կարծիքներով և եզրակացություններով, այլ փորձ է արվել քննարկվող հարցերը լուսաբանել աղբյուրագիտական կայուն հիմնավորումներով:

Ուսումնասիրության փորձաքննությունը և գործնական նշանակությունը: Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում ու ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի երկու հոդվածներում:

Աշխատության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել Հայոց միջնադարյան պատմության շարադրման, բուհական հատուկ դասընթացների, ուսումնական ձեռնարկների և դասագրքերի կազմման համար, ինչպես նաև՝ Հայոց պետականությանը նվիրված ուսումնասիրություններում և առանձին մենագրություններում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների ցանկից: Աշխատության ընդհանուր ծավալը 158 մեքենագրական էջ է:

Ներածության մեջ հիմնավորված է բեմայի գիտական արդիականությունը, աշխատանքի ու բարձրացված հարցերի կարևորությունը և ընդհանուր բնութագիրը: Ներկայացված է սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համառոտ տեսությունը:

Գլուխ առաջին. «Կիլիկիայի Հայոց Մեծ իշխանության վերականգնումն ու զարգացումը XII դարի 40-80-կան թվականներին»:

Այս գլխում հնարավորին չափ սեղմ ներկայացված է Կիլիկիայի Հայոց իշխանապետության 1080-1137թթ. քաղաքական պատմությունը, 1137թ. Բյուզանդիայի կայսր Հովհաննես Բ Կոմնենոսի (1118-1143) արշավանքը դեպի Կիլիկիա, որի հետևանքով հեղաբեկվեց Հայոց Մեծ իշխանությունը և առժամանակ ընդհատվեց Ռուբինյանների գահակալումը:

Սկզբնաղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լևոն Ա-ի (1129-1137) որդի Թորոսը 1144/45թթ. ընթացքում փախել է բյուզանդական գերությունից, Կոստանդնուպոլսից ժամանել Կիլիկիա, սակայն երկրի ազատագրումն սկսել է ոչ թե նրանց թվականին, ինչպես ընդունված է պատմագիտության մեջ, այլ 1147-48թթ., երբ ստեղծվել էին բավականին բարենպաստ ներքին և արտաքին պայմաններ. Թորոս Բ-ը շահել է Կիլիկիայի հայ, ասորի և ֆրանկ բնակչության համակրանքը, նախապայմաններ ստեղծել վճռական գործողությունների անցնելու համար, 1147թ. սկսվել էր Խաչակրաց Երկրորդ արշավանքը, Բյուզանդիան զբաղված էր սերբերի և Սիկիլիայի նորմանների դեմ պատերազմներով, իսկ Կիլիկիային հարևան պետությունները գտնվում էին սուր հակամարտությունների մեջ:

1147-1157թթ. Թորոս Բ-ի ռազմական փայլուն հաղթանակների և ճկուն դիվանագիտության շնորհիվ ոչ միայն վերահաստատվեց ընդհատված Հայոց Մեծ իշխանությունը Կիլիկիայի Լեռնային և Դաշտային մասերում, այլև նրա սահմանները հարավ-արևելքում ընդլայնվեցին մինչև Թիլ Համդուն և Ալեքսանդրեկի ծոց, իսկ հարավ-արևմուտքում՝ մինչև Լամոս բերդ:

Այս իրադարձությունները Բյուզանդիայի կայսր Մանվել Կոմնենոսին (1143-1180) ստիպեցին վերստին խոշոր ուժեր կենտրոնացնել Արևելքում՝ Բյուզանդիայի գերիշխանությունը Կիլիկիայում և Անտիոքում վերականգնելու, ինչպես նաև Իկոնիայի սուլթանության և Մոսուլի արաբեկության առաջխաղացումը կանխելու համար: Թորոս Բ-ը, ճիշտ գնահատելով ուժերի հարաբերակցությունը, չգնաց բացարձակ առճակատման, այլ առերես ճանաչեց կայսեր գերագահությունը, իսկ կայսրը՝ նրա իշխանական իրավունքները, շնորհեց պանսեբաստոսի տիտղոս և «զայլ երկիրն պարզեցաց Թորոսի մշտնջենատր և ամրացոյց արքունական սիզեդի»:

Կիլիկիայի Հայոց իշխանապետության հարաբերությունները Բյուզանդիայի հետ վերստին սրվեցին 1162թ.: Հայագիտության մեջ այս դեպքերի մասին ընդունված է այն տեսակետը, որ դրա պատճառը Թորոս Բ-ի եղբայր Ստեփաննի սպանությունն էր բյուզանդական դուքս Անդրոնիկոս Ֆերբենոսի կողմից: Սակայն սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների համադրումը հանգեցնում է հետևյալ եզրակացության: 1162թ. Մանվել կայսրը, չորս տարվա ընդմիջումից հետո, Կիլիկիայում վերստին նշանակել է բյուզանդական կառավարիչ՝ ի դեմս Անդրոնիկոս Ֆերբենոսի: Վերջինս կարողացել է կարճ ժամանակամիջոցում զավթել Դաշտային Կիլիկիայի մեծ մասը և դավադրաբար սպանել Հայոց բանակի սպարապետ Ստեփաննին: Փաստորեն, Թորոս Բ-ն Անդրոնիկոս դքսի դեմ ռազմական գործողություններ է ծավալել ոչ միայն եղբոր վրեժը լուծելու, այլև Դաշտային Կիլիկիայում կորցրած տարածքները վերականգնելու համար:

1162-1167թթ. ընթացքում Բյուզանդական կայսրությունը բազմիցս փորձեց հնազանդեցնել Թորոս Բ իշխանապետին և իր գերիշխանության տակ առնել Կիլիկիայի Հայաստանը: Սակայն Կիլիկիայում վերստին դուքս-վերատեսուչներ նշանակելը և նրանց մեծաքանակ ուժեր տրամադրելը ցանկալի արդյունք չպարզեցին բյուզանդական արքունիքին: Թորոս Բ-ը կարողացավ ոչ միայն կանխել բյուզանդական դքսերի՝ Անդրոնիկոս Ֆերբենոսի, Կոստանդին Կալամանոսի, Ալեքսիոս Աքսուխի, Անդրոնիկոս Կոմնենոսի բոլոր ոտնձգությունները և պահպանել Կիլիկիայի Հայոց Մեծ իշխանության անկախությունը, այլև հնազանդեցրեց Լամբրոնում իշխող բյուզանդամետ Հեթումյաններին:

Հիշյալ տարիներին Թորոս Բ-ի միջազգային հեղինակությունն այնքան էր բարձրացել, որ հարևան պետությունները՝ Անտիոքի դքսությունը, Տրիպոլիսի կոմսությունը, բազմիցս դիմել են նրա դաշնակցությանը ընդդեմ Մոսուլի և Հալեպի արաբեկ Նուր ադ-Դինի Ջանգիի (1145-1174) և Բյուզանդական կայսրության:

Մահից առաջ՝ 1168թ. Թորոս Բ-ը Հայոց իշխանապետական գահը թողեց իր մանկահասակ որդի Ռուբեն Բ-ին և նրա խանամակալ նշանակեց իր

մորաքրոջ որդուն՝ Թովմասին: Սակայն դեռևս 1165թ. իր քաղաքական անհանդուրժողականության և Մեծ իշխանի դեմ դավադրություն կազմակերպելու համար Կիլիկիայից արտաքսված Թորոս Բ-ի եղբայր Մլեհը, որը ռազմական ծառայության էր մտել Նուր ադ-Դինի մոտ, ներխուժեց Կիլիկիա, Հայոց իշխանների խորհրդին ստիպեց ճանաչել իր իշխանական իրավունքները և բռնատիրեց իշխանական գահը: Մլեհ Ռուբինյանին (1169-1175) պատմիչները ներկայացնում են ընդգծված հակակրանքով և խիստ բացասական գծերով: Սակայն հարկ է կարծել, որ Մլեհը վարում էր իր քաղաքական հակառակորդներին և կենտրոնախույս ուժերին սանձելու, բարձրաստիճան հոգևորականների իրավունքները կրճատելու, վանքերում կուտակված մեծաքանակ հարստությունները հողոտ պետական գանձարանի բռնագրավելու և կենտրոնական իշխանությունը հզորացնելու խելամիտ քաղաքականություն: Սկզբնաղբյուրների՝ Մլեհի նկատմամբ դժգոհությունը և բացասական վերաբերմունքը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ նա կտրուկ փոխեց երկրի արտաքին քաղաքականության ավանդական գիծը: Կիլիկիայի Հայաստանի նախկին դաշնակիցներից՝ հավատակից պետություններից (Տրուսադեմի թագավորություն, Անտիոքի դքսություն) Մլեհը շրջվեց դեպի Մոսուլի և Հալեպի հզոր արաբեկ Նուր ադ-Դինը և միաժամանակ սկսեց վարել բացահայտ հակալատինական և հակաբյուզանդական քաղաքականություն:

Մլեհի ճկուն և յուրահատուկ արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև խիստ կենտրոնացված իշխանությունը նպաստեցին Կիլիկիայի Հայաստանի նոր հզորացմանը և սահմանների ընդլայնմանը: Դեռևս 1168-69թթ. Բյուզանդական կայսրությունը տիրել էր Դաշտային Կիլիկիայի մեծ մասին, վերստին գլուխ էին բարձրացրել Լամբրոնի իշխանները: 1169-73թթ. ընթացքում Մլեհը հաղթական կռիվներ մղեց բյուզանդական զավթիչների դեմ, ազատագրեց Դաշտային Կիլիկիան, հնազանդեցրեց Լամբրոնի անջատամետ իշխան Հեթումին: Մլեհ իշխանապետն ընդարձակեց Կիլիկիայի Հայոց պետության հարավ-արևելյան սահմանը՝ իր հսկողության տակ առնելով Ամասոսյան լեռնաշղթան՝ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող լեռնանցքներով հանդերձ:

Պալատական դավադրության զոհ դարձած Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփաննի ավագ որդի Ռուբեն Գ-ը (1175-1187), որը նույնպես գահ բարձրացավ Կիլիկիայի Հայոց իշխանների խորհրդի համաձայնությամբ: Ռուբեն Գ Մեծ իշխանը, միջազգային նոր իրավիճակի թելադրությամբ, շուտով հրաժարվեց իր մայրամուտն ապրող Մոսուլի արաբեկության դաշնակցությունից ու վերականգնեց Կիլիկիայի Հայաստանի դաշինքը Անտիոքի դքսության և Տրուսադեմի թագավորության հետ: Մինչև 1180թ. Ռուբեն Գ-ը վերացրեց Բյուզանդական կայսրության վերջին հենակետերը Դաշտային Կիլիկիայում, Ալեքսանդրիեի ծովածոցից մինչև Պոսական գետը ձգվող ծով-

եզերքը մաքրեց օտար նվաճողներից և, փաստորեն, հաղթական ավարտին հասցրեց հայոց 100-ամյա ազատագրական պայքարը Բյուզանդիայի և շրջակա մյուս բշնամիների դեմ, զգալիորեն ընդլայնեց և ամրապնդեց Հայոց Մեծ իշխանության պետական սահմանները:

Գլուխ երկրորդ. «Կիլիկիայի Հայոց Մեծ իշխանության եզորացումը 1187-1198 թվականներին»:

1187թ. մայիսին Կիլիկյան Հայաստանի Մեծ իշխան օժվեց Ռուբինյան տոհմի ներկայացուցիչ Լևոն Բ-ը: Իր կառավարման սկզբնական տարիներին նա հաղթական կռիվներ մղեց մահմեդական զավթիչների դեմ: Այսպես, 1187թ. մայիսին նա ջախջախիչ հարված հասցրեց ոմն Ռոստոմի գլխավորությամբ Կիլիկյան Հայաստան ներխուժած քուրքմենական խառնամբոխ զորքերին: Ցարդ հայազիտության մեջ անուշադրության և մատնված այդ մասին խոսող Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմայ» պոեմը, որը տեղեկացնում է, որ բացի Սահ մերձակա Ռավինի դաշտում տեղի ունեցած ճակատամարտից, Լևոն Բ-ը քուրքմեններին ջախջախել է նաև Մարաշից ոչ հեռու գտնվող Արեզ քաղաքի մոտ: 1188թ. Կիլիկյան Հայաստան ներխուժեցին Եգիպտոսի Այուբյան սուլթան Սալահ ադ-Դինի (1174-1193) զորքերը, որի մասին պատմագիտությանը հայտնի էին միայն անուղղակի տեղեկություններ: Սակայն վերոհիշյալ արշավանքի մասին հիշատակվում են Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմայ» պոեմում և 1193թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում: Գրանցից պարզորոշ երևում է, որ եգիպտական զորքերը, ներխուժելով Կիլիկիայի Հայոց իշխանապետություն, հանդիպել են Լևոն Բ-ի դիմադրությանը, հաշտություն կնքել և նահանջել:

Այսպես օժվելով երկրի արևելյան և հարավ-արևելյան սահմանների անվտանգությունը, Լևոն Բ իշխանապետն իր ուժերը կենտրոնացրեց Կիլիկյան Հայաստանի արևմտյան շրջաններում՝ ընդդեմ սելջուկյան քուրքերի և դեռևս իրենց գոյությունը պահպանող հույն ավատատերերի: XII-XIII դարերի հայ և օտար հեղինակների անուղղակի տեղեկությունների ու բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանների համադրման և վերլուծության շնորհիվ պարզվում է, որ 1188-90թթ. ընթացքում, մինչև Երրորդ Խաչակրության զորքերի մուտքը Լարնան, Լևոն Բ-ը Կիլիկյան Հայոց իշխանապետության սահմանները հյուսիս-արևմուտքում ընդլայնել է մինչև Լիկատնիս, իսկ արևմուտքում՝ մինչև Մելաս գետը: Այսինքն՝ Իսավրիս երկրամասը և Պամփիլիա երկրամասի զգալի մասը մինչև 1190թ. սկիզբը միավորվել են Կիլիկիայի հայկական Մեծ իշխանությանը:

Երրորդ Խաչակրաց արշավանքի (1189-1192թթ.) ժամանակ Լևոն Բ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց այդ արշավանքի առաջնորդների՝ «Հռոմեական սրբազան կայսրության» կայսր Ֆրիդրիխ Ա Շիկամո-

րուսի (1155-1190), Անգլիայի բազավոր Ռիչարդ Ա Առյուծասրտի (1189-1199), ինչպես նաև Հռոմի պապ Կղեմեն Գ-ի (1187-1191) հետ, ապա իր նավատորմով մասնակցեց 1191թ. Կիպրոս կղզու գրավմանը, Ալրայի պաշարմանն ու ազատագրմանը: Լևոն Բ-ը, օգտվելով պատեհ իրավիճակից, ջանում էր Հայոց իշխանապետությունը հռչակել թագավորություն և թագավոր օժվել Եվրոպայի վեհապետների ձեռքով: Սակայն Ֆրիդրիխ Ա-ը հանկարծամահ եղավ 1190թ. հունիսի 10-ին, իսկ Ռիչարդ Ա-ը 1192թ. սեպտեմբերի 22-ին հաշտության պայմանագիր կնքեց Մալահ ադ-Դինի հետ և շտապ հեռացավ Անգլիա: Մրանով իսկ Լևոն Բ-ի թագադրությունն առժամանակ հետաձգվեց:

Արաբ պատմագիր Բահա ադ-Դին Իբն Շադդադի վկայությամբ՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Տղան (1173-1193), Ֆրիդրիխ Շիկամորուսի մահից հետո, նամակներ է հղել Սալահ ադ-Դինին, որոնցում փորձում էր նրան հավատացնել, որ խաչակրաց զորքերը Կիլիկյան Հայաստան են մտել Լևոն Բ-ի կամքին հակառակ, տեղեկություններ հաղորդել խաչակիրների ուժերի, զինվածության և անցած ուղու մասին: Դ.Ալիշանը և Ֆ.Տորնեբիզը արաբ պատմիչի տեղեկությունները համարում են կեղծիք, իսկ Գ.Միքայելյանը լիովին վստահում է դրանց բովանդակությանը, գտնելով որ Ֆրիդրիխ Ա-ի արշավանքի հաջողության դեպքում լուրջ վտանգ կսպառնար Կիլիկիայի Հայոց պետականությանը: Ընդունելով այդ նամակների վավերականությունը, այնուհանդերձ, չպետք է անվերապահորեն վստահել դրանց բովանդակությանը, իսկ Գրիգոր Գ Տղայի սիրաշահող նամակները նպատակ ունեին, խաչակրաց արշավանքի անհաջողության դեպքում, Կիլիկյան Հայաստանը, մասնավորապես՝ կաթողիկոսի արքունիստ Հռոմկլան գերծ պահել Սալահ ադ-Դինի վրեժխնդրությունից:

Օգտվելով Խաչակրաց Երրորդ արշավանքի ժամանակ ստեղծված բարենպաստ իրավիճակից, Լևոն Բ-ը 1191թ. Այուբյան սուլթանությունից գրավեց Ամանոսյան լեռնաշղթայի հարավային մատույցները և Բեյլանի կիրճը հսկող Պաղրաս բերդը: 1193թ. գարնան սկզբին Սալահ ադ-Դինի զորաբանակը շարժվեց դեպի Կիլիկիա և ճամբարեց Սև գետի ափին: Սակայն անխուսափելի թվացող հայ-եգիպտական ճակատամարտը խափանվեց Սալահ ադ-Դինի հանկարծամահությամբ (մարտի 4-ին): Այնուհետև Կիլիկյան Հայաստանին սպառնացող այդ վտանգն զգալիորեն նվազեց, քանի որ սուլթանի ժառանգների միջև սկսված պատերազմները բուլացրեցին և մասնատեցին նրա տերությունը:

Հայոց Մեծ իշխանության և Անտիոքի դքսության միջև դեռևս Ռուբեն Գ-ի օրով բորբոքված հողային վեճերը և առաժառկջջանում գերակայության հասնելու համար մրցակցությունը շարունակվեցին նաև Լևոն Բ-ի գահակալման առաջին տարիներին: 1187-91թթ. ծավալված մրցապայքարում պարտված Բոհեմունդ Գ Կակազը (1163-1201) հարկադրված եղավ Լևոն Բ-ին վերա-

դարձնել ոչ միայն Մարվանդիքարը, Թիլը և Դկերը, այլև կորցրեց Ամանոսյան լեռնաշղթայի հարավային ստորոտին տարածվող Հոռոսոս գավառը: Անհաջողության մատնվեց նաև Բոհեմունդ Գ-ի 1193թ. կազմակերպած դավադրությունը, որի հետևանքով դուքսն ինքը զերվեց Լևոն Բ-ի կողմից: 1194թ. կնքված հաշտության պայմանագրով Անտիոքի դուքսը ճանաչեց Հայոց Մեծ իշխանի ավագությունը, հրաժարվեց Կիլիկիայի հարավ-արևելյան հողերի նկատմամբ հավակնությունից: Պայմանագիրն ամրապնդվեց Բոհեմունդ Գ-ի ավագ որդի Ռայմոնդի և Ռուբեն Գ-ի դուստր Ալիծի ամուսնությամբ, որոնցից ծնված որդին պետք է ժառանգեր Անտիոքի գահը:

1190-ական թթ. Լևոն Բ-ը բազմաթիվ քայլեր ձեռնարկեց իշխանության հետագա կենտրոնացման և հզորացման համար: Նա ասպարեզից հանեց Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղային, նրա քրոջ որդիներին՝ Մամեստիայի բերդատեր իշխան Հեթումին և Մելիկիայի բերդատեր իշխան Շահնշահին, նորընտիր կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժին (1193-1194): Լևոն Բ-ը ճնշեց նաև դժգոհ հոգևորականների ընդդիմությունը, չխնայելով նույնիսկ իր մերձավոր խորհրդական և ատենադպիր, Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացուն: Դրանից հետո բարձրադաս հոգևորականությունը գրկվեց պետության քաղաքական գործերին միջամտելու իր դարավոր և ավանդական իրավունքներից, սահմանափակվելով սուկ կրոնա-բարոյական քարոզչությամբ:

Լևոն Բ-ի իշխանապետության տարիներին զգալիորեն կարգավորվեց և ամրոցացվեց պետական կառավարման համակարգը: Սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ պետական կառավարման մարմինների ձևավորումը Կիլիկյան Հայաստանում սկսվել է իշխանապետության հիմնադրումից ի վեր, որոնք իրենց հետագա զարգացումն ստացան XII դարի երկրորդ կեսին, իսկ ամբողջացվեցին և համակարգվեցին Լևոն Բ-ի գահակալման ժամանակաշրջանում:

Լևոն Բ-ի ակտիվ արտաքին քաղաքականությունը 1190-ական թթ. երկրորդ կեսին հանգեցրեց Կիլիկյան Հայաստանի սահմանների էլ ավելի ընդարձակմանը: Միխայել Ասորու «Ժամանակագրություն» երկի հայերեն քարգմանիչը մատնանշում է 1196/97թթ. Հայոց Մեծ իշխանության մեջ ընդգրկված տարածքները՝ Լեռնային և Դաշտային Կիլիկիաները («Երկուց Կիլիկիեից լեռամբք և դաշտօք»), ամբողջ Բսավրիան («զհասարակն Սուրացոց»), Երկրորդ Կապադոկիայի և Երրորդ Հայքի մի քանի շրջաններ («մասունս ոչ սակաւ յերկրորդ Կապադոկացոց, Երրորդ Հայոց»), հյուսիսային Ասորիքի մի քանի գավառներ («յԱսորեստանեաց գաւառաց»):

Այսպիսով, Լևոն Բ Մեծ իշխանը 1190-ական թվականներին կարգավորեց և զգալիորեն ամրոցացրեց պետական կառավարման համակարգը, ընդլայնեց և ամրապնդեց Կիլիկյան Հայաստանի սահմանները, շրջակա բշտամիների դեմ տարած հաղթանակներով բարձրացրեց Հայոց պետության միջազ-

գային հեղինակությունը և ստեղծեց բոլոր նախադրյալները արքայապատիվ բազով պսակվելու համար:

Գլուխ Երրորդ. «Կիլիկիայի Հայոց բազավորությունը 1198-1219 թվականներին»:

Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Ա-ի հետ 1190թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցած բանակցություններում, փաստորեն, Լևոն Բ-ը ճանաչվել էր Հայոց բազավոր: Ուստի բնավ պատահականություն կամ բերիմացություն չէ, որ մինչև պաշտոնական բազադրությունը Լևոն Բ-ը որոշ հայկական աղբյուրներում կոչվում է բազավոր: Սակայն նրա բազադրությունը և Կիլիկիայի հայկական պետության միջազգայնորեն բազավորություն ճանաչվելը ձգձգվեց սուկ Ֆրիդրիխ Ա Օիկամորուսի մահվան և հետագա այլևայլ հանգամանքների քերումով:

Լևոն Բ-ի դիվանագիտական ակտիվ բանակցությունները «Հռոմեական սրբազան կայսրության» նոր կայսր Հայնրիխ Զ-ի (1191-1197) և Հռոմի պապ Կեղեստինոս Գ-ի (1191-1198) հետ շուտով պսակվեցին հաջողությամբ: 1197թ. վերջին Կիլիկյան Հայաստան ժամանեց Մայնցի արքեպիսկոպոս և Սուրբ Սաբինայի ծիրանավոր կարդինալ Կոնրադ Վիտտելսբախը, որն իր հետ բերեց կայսեր և պապի ուղարկած քազը: Մինչ այդ, շտապելով առաջ անցնել «Հռոմեական սրբազան կայսրությունից» և Հռոմի պապից, 1196թ. վերջին Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս Գ-ը Լևոն Բ-ին ուղարկեց մեծամեծ ընծաներ, արքայական քազ և հանդերձանք: 1197թ. Լևոն Բ-ը Կոստանդնուպոլիս ուղարկեց պատասխան պատվիրակություն՝ իր քեռու՝ Հալկան իշխանի և Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ: Պատվիրակները շնորհակալություն հայտնեցին Ալեքսիոս Գ-ին, միաժամանակ հասկացնելով, որ կայսեր առաջարկները (հայկական և բյուզանդական եկեղեցիների միասնություն, Գերմանիայի ուղարկած քազի մերժում) ընդունելի չեն կարող լինել: Գերմանիայի և Բյուզանդիայի կայսերից հավասարապես քազ ընդունելու փաստով Լևոն Բ-ը կամենում էր ոչ միայն շեշտել իր պետության միջազգային կշիռն ու հեղինակությունը, այլև չեզոքացնել նրանց միջամտությունները Կիլիկյան Հայաստանի գործերին:

Լևոն Բ-ի պաշտոնական բազադրման արարողությունը տեղի ունեցավ 1198թ. հունվարի 6-ին, Տարսոն քաղաքի Սուրբ Սովիա մայր տաճարում, որին մասնակցում էին Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները, բարձրադաս հոգևորականները, Մեծ և Փոքր Հայոց հոգևոր ներկայացուցիչները, Գերմանիայի, Հռոմի պապի, Բյուզանդիայի, Բաղդադի խալիֆի պատվիրակները: Այդ հյուրերի ներկայությամբ Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203) Լևոն Բ Մեծագործին օժեց Հայոց բազավոր:

Հայկական սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները միահամուռ հավաստում են, որ 1198թ. Կիլիկիայում վերակերտված Հայոց թագավորությունը հավակնել է համահայկական իրավասության: XII-XIII դդ. հայ պատմագիրները Կիլիկիայում հռչակված թագավորությունը դիտում են Հայոց հնավանդ թագավորության վերակերտում և այն զնահատում որպես Հայոց պատմության կարևորագույն իրադարձություն, Լևոն Բ-ին համեմատում են Պարույր Սկայրդոու, Հրաչեի և Տրդատ Գ Մեծի հետ: Լևոն Բ-ը կրում էր «Թագաւոր ամենայն Հայոց, և մահանգին Կիլիկեացոց և Իսաւրիոյ» տիտղոսը, որով ներկայացնում և ընդգծում էր իր կերտած թագավորության համահայկական բովանդակությունն ու նշանակությունը, իսկ Կիլիկիան և Իսավրիան դիտում էր որպես իր ծրագրած ամբողջական Հայոց պետության նահանգներ: Մայր Հայաստանի հոգևորականությանը սիրաշահելու և նրա աջակցությունն ստանալու համար Լևոն Բ-ը մի շարք հարցերում հետևողականորեն հաշվի էր առնում նրանց կարծիքը, առաջնությունը տալով նրանց դիրքորոշմանը: Իրենց հերթին, Մայր Հայաստանի բարձրադաս հոգևորականները և հյուսիս-արևելյան Հայաստանում իրենց ինքնավար իշխանությունը հաստատած Ջաքարյանները սիրահոծար ճանաչում էին Լևոն Բ-ի թագավորական իրավասությունը և մի շարք, հատկապես համազգային նշանակություն ունեցող հարցերում դիմում նրա գերագույն վճռին: Մակայն Լևոն Բ Մեծագործի այս խորհմաստ քաղաքականությունը նրա մահից հետո չունեցավ իր տրամաբանական շարունակությունը: Կիլիկիայի Հայոց թագավորության համազգային իրավասության կայացմանը խոչընդոտեցին ոչ միայն Հեթումյան արքայատան անհետևողական քաղաքականությունն այդ արմատական հարցում, այլև հետագա ժամանակաշրջանում ստեղծված միջազգային բարդ և հարսփոփոխ պայմանները:

XIII դարի պատմագիր Սմբատ Սպարապետն իր «Տարեգիրք» երկում հիշատակում է Լևոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակցած Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանների անվանացանկը: Հայ և օտար սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների համադրական վերլուծությամբ պարզաբանվում են այդ բերդատեր իշխանների ինքնությունը, նրանց տիրությունների տեղերը և զբաղեցրած դիրքը Կիլիկիայի Հայոց ավատակալական համակարգում: Հայոց բերդատեր իշխանների ազգային պատկանելիության հանգամանալից քննությունից հետո ակներև է դառնում, որ Կիլիկյան Հայաստանի կենտրոնական գավառներում XII դարի վերջին XIII դարի սկզբին կառավարել են քացառապես հայազգի բերդատեր իշխաններ, արևելյան գավառներում՝ ինչպես հայ, այնպես էլ արևմտավրոպական ծագում ունեցող բերդատերեր, իսկ արևմտյան շրջաններում՝ հայ և հույն բերդատեր իշխաններ: Ընդ որում, 46 բերդատեր իշխանների անվանացանկում քացարձակ

մեծամասնություն են կազմում հայ ավատատերերը՝ թվով 31, մնացած 15 բերդատերերից 8-ը արևմտավրոպացիներ են (ֆրանկներ), իսկ 7-ը հույներ:

Հայոց թագավորությունը վերականգնելուց հետո Լևոն Բ Մեծագործը նոր եռանդով շարունակեց իր միապետությունը կենտրոնացնելու և հզորացնելու քաղաքականությունը: Նա 1201թ. վերջնականապես հնազանդեցրեց Լամբրոնի անջատմետ Օշինյան-Հեթումյաններին, 1207թ. ձերբակալեց և բանտարկեց Կոնստանդինոպոլիսի իշխանատան ներկայացուցիչներին, աթոռարկեց այդ հարցում իր հետ գտնված Հովհաննես Չ Սսեցի կաթողիկոսին (1203-1219), նոր կաթողիկոս հռչակելով իրեն հնազանդ Դավիթ Արքակաղնեցուն (1207-1211): Լևոն Բ-ը նույնիսկ չխնայեց իր հորերաբայր Մլեհի որդուն՝ Բարձրբերդի Գևորգ (Գորգ) իշխանին: Վերջինիս քաղաքական ասպարեզից հանելու և զահի հավակնությունից զրկելու համար Լևոն Բ-ը 1209թ. Գևորգ իշխանին բանտարկեց Սսի բերդում, ապա կուրացրեց: Ռուբինյան տոհմի արական ճյուղի վերջին ներկայացուցիչը շուտով ազատվեց բանտից և հաստատվեց իր հոր հիմնած Մեծքար վանքում, որտեղ էլ մահացավ 1214թ.:

Լևոն Բ-ը շուրջ երկու տասնամյակ ռազմական և դիվանագիտական եռանդուն պայքար մղեց Անտիոքի դքսության գահաժառանգման համար, որն ավարտվեց նրա հաղթանակով. 1216թ. փետրվարի 14-ին հայկական զորքերը գրավեցին Անտիոքը, որտեղ Ալիծի և Ռայմոնդի որդի Ռուբեն-Ռայմոնդը հռչակվեց Անտիոքի դուքս: Դեռևս 1209թ. Լևոն Մեծագործը որդեգրեց Ռուբեն-Ռայմոնդին և նրան հռչակեց Հայոց գահաժառանգ: Այս խորամիտ քայլով Լևոն Բ-ը փորձում էր միավորել Կիլիկյան Հայաստանը և Անտիոքի դքսությունը, հիմնել քրիստոնյա միացյալ և հզոր պետություն: Դրանով իսկ նա ակնկալում էր բավարար հիմքեր ստեղծել քրիստոնյա Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների համագործակցության համար, համատեղ ուժերով դիմակայել մահմեդական աշխարհին և, ի վերջո, հասնել իր փայփայած գերագույն նպատակին՝ Մայր Հայաստանի և մերձակա բոլոր հայերի ազատագրմանը: Մակայն շուտով Լևոն Բ-ը հիասթափվեց Ռուբեն-Ռայմոնդի վարքից և Հայոց գահաժառանգ հռչակեց իր Ջապել դստերը:

Անտիոքի գահաժառանգման համար մղվող պայքարում Կիլիկյան Հայաստանը թագմիցս բախվեց Անտիոքի դուքս Բոհեմունը Դ Միակնանուն աջակցող Իկոնիայի սուլթանության և Հալեպի ամիրայության հետ: Պարզաբանվում է, որ Իկոնիայի սելջուկյան սուլթան Ջեյ-Զաուդ Ա-ի (1210-1219) հետ Լևոն Բ-ի վերջին բախումը տեղի է ունեցել 1217թ. աշնանը և ոչ թե 1216թ., ինչպես ընդունված է պատմագիտության մեջ:

Մահից առաջ Հայոց արքան Ջապելի և պետության խնամակալներ նշանակեց իր բեռորդի Կոստանդին սպարապետին, Հայոց սենեակալ Ատանին և Հայոց կաթողիկոս Հովհաննես Չ Սսեցուն: 1219թ. մայիսի 1-ին Մրվանա

գյուղի մոտ Լևոն Բ Մեծագործը վարդապետ Գևորգ Սկևռացու ձեռքով բնդու-
նեց սուրբ հաղորդությունը և ավանդեց հոգին:

Վերջաբանում ամփոփված են ատենախոսության հիմնական եզրակա-
ցությունները:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի
հետևյալ հոդվածներում.

1. Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները XII դարի վերջին և
XIII դարի սկզբին, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1994, 3, էջ 50-65:

2. Կիլիկիայում վերակերտված Հայոց բազավորության համազգային
իրավասությունը, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1995, 3, 31-38:

А.М.АРШАМЯН

ПРОЦЕСС УСИЛЕНИЯ ВЕЛИКОГО КНЯЖЕСТВА РУБЕНИ-
ДОВ И СТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОГО ЦАРСТВА В КИЛИКИИ
(1145-1219гг.)

РЕЗЮМЕ

Диссертацией на соискание ученой степени кандидата истори-
ческих наук представлена политическая история и процесс развития
государственности Киликийской Армении во второй половине XII-
начале XIII вв., в частности в период правления Левона II (1187-1219).

Введение представляет цель и задачи диссертационной темы,
ее актуальность в качестве научной проблемы. Приводятся существ-
ующие научные источники, ставится и индивидуально анализиру-
ется затрагиваемая проблема.

В первой главе - "Восстановление и развитие Великого Ар-
мянского киликийского княжества в 40-80гг. XII в.", представлены
восстановление армянской государственности в Киликии, territori-
альное расширение княжества в 1147-1187гг., внутренняя и внешняя
политика Тороса II, Млеха и Рубена III.

Глава вторая - "Усиление Великого Армянского киликийского
княжества в 1187-1198гг.". В этой главе исследованы дальнейшее

расширение княжества в 1187-1197гг., формирование, обобщение и
систематизация органов государственного управления, усиление
княжеской власти и централизация государства. Представлены
взаимоотношения Киликийской Армении с соседними государст-
вами.

Глава третья - "Армянское Киликийское царство 1198-1219гг.". В этой главе показано, что восстановленное в 1198г. Армянское царство в Киликии претендовало на общенациональную юрисдикцию. Здесь освещаются персоны высшей феодальной знати Киликийской Армении-46-и владетельных князей, принявших участие в коронации Левона II, определяются и уточняются местонахождения владений и крепостей этих князей, устанавливается их иерархический статус в системе государства. Также исследована внутренняя политика Левона II с целью усиления и централизации монархии. Показывается военная и дипломатическая борьба Левона II для унаследования трона Антиохийского княжества.

В заключении изложены основные выводы по важнейшим рассматриваемым проблемам и вопросам данного периода.

Վ. Արշամյան

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան



NLAT00079

